ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

23 հունիսի 2026 թվական

6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 5-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 15.19

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՝ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 3 անդամ՝

Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Հայկ Գրիգորյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան, խնդրեմ:

Ռոբերտ Ծովյան

-Պարոն Ավինյան, գրեթե վերջին 3 տարվա ընթացքում գործակարգավարական խորհրդակցությունների ժամանակ 1 դեպք է եղել, երբ աշխատակազմի վերահսկողության վարչությունը ներկայացրել է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում՝ ստուգումներ անցկացնելու ժամանակ հայտնաբերված խախտումներ: Այս փաստից ելնելով՝ ցանկանում եմ առաջարկել, որ գործակարգավարական խորհրդակցությունների ընթացքում տվյալ վարչությունը մշտապես ելույթներով հանդես գան, որպեսզի իմանանք ինչով են ընդհանրապես նրանք զբաղվում, քանի որ հանրային դաշտում կան շատ բողոքներ անօրինական գործողությունների մասով: Առաջարկում եմ, որ աշխատակազմի վերահսկողության վարչությունը ստուգի իրավիճակը գերեզմանատներում, որովհետև վերջին

ժամանակահատվածում հաճախ եմ լսում, որ վաճառվում են հողատարածք 5000 ԱՄՆ դոլլարից մինչև 120000 ԱՄՆ դոլլար արժողությամբ:

Հաջորդ հարցս՝ պարոն Արեյանի հետ հանձնաժողովի նիստերից 1-ի ընթացքում որոշման մեջ փոփոխություն ենք արել, որ թե՛ շինարարների, թե՛ «Գազպրոմ Արմենիա», թե՛ «Հայաստանի էլեկտրական ցանցերի» և թե՛ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունների կողմից իրականացվում են աշխատանքներ, այսինքն, եթե ասֆալտը կտրում են, կտրվածքը մի տեղ սխալ է լինում պետք է ամբողջ երկայնքով և նույն լայնությամբ ասֆալտը վերականգնել: Իհարկե, այդ որոշումն ընդունվել է, բայց մինչ այժմ այն փողոցները, որտեղ աշխատանքներ են կատարվում, (օրինակ Պռոշյանի փողոցը, Եղվարդի խճուղին) հին կարգով են դեռ առաջնորդվում, որի հետևանքով Երևանի քաղաքապետարանը 1 կամ 2 տարի անց պետք է ահռելի գումար տրամադրի ասֆալտե շերտը վերականգնելու համար:

Տիգրան Ավինյան

-Պարոն Ծովյան, շնորհակալ եմ, Ձեր առաջարկն ընդունելի է, աշխատակազմի վերահսկողության վարչությունը կարող է պարբերաբար հանդես գալ զեկույցներով: Առհասարակ վերջին 3 տարվա ընթացքում տվյալ վարչությունը բազմաթիվ անգամներ ներկայացրել է զեկույցներ, այնուամենայնիվ, Ձեր մատնանշած գործառույթներին վերաբերող զեկույցներն անվեհապահորեն կլսենք:

Ինչ վերաբերում է գերեզմանատներում որոշակի հարցերին և խնդիրներին՝ առկա է 1 արձանագրված խնդիր: Այն է, որ ունենք նախկինից վերահուղարկավորման փաստաթղթեր, որոնք փաստացի հիմք չունեն վերահուղարկավորման, և տարբեր մարդիկ ունեն այդ տեսակ թղթեր: Երկրորդային շուկայում նմանատիպ փաստաթղթերի վաճառք է տեղի ունենում, այնուամենայնիվ, մենք կարողանում ենք իրականացնել որոշակի կանխարգելիչ միջոցառումներ, և թույլ չտալ նման բաներ, բայց պետք է ևս մեկ անգամ անդրադառնալ և հասկանալ դրա արդյունավետությունը:

Կառուցապատողների հետ երեկվա հանդիպման ժամանակ պարոն Արեյանը բարձրացրել է ասֆալտաբետոնային ծածկույթի հետ կապված հարցը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

- Պարոն Ծովյան, Ձեր կողմից նշված դեպքն արդեն կիրառելի է: Խոսքը վերաբերում էր, այն իրավիճակին, եթե վնասվել է երթևեկելի գոտին, ապա պետք է ոչ թե խրամուղին բերել երկրաչափական տեսքի, այլ վերականգնել երթևեկելի ուղին ամբողջությամբ: Այս նախադեպն արդեն ունենք Պռոշյան փողոցում՝ Դվին հյուրանոցից մինչև Պռոշյան-Դերենիկ Դեմիրճյան փողոցների խաչմերուկը: Իրականացվել է 3 մետր լայնությամբ 1 ամբողջ երթևեկելի գոտու վերականգնում, իսկ ինչ վերաբերում է շարունակությանը, դա դեռ ավարտ չունի, դրանք 2 լոտեր են: Այս դեպքը կիրառելի է, որևէ մտահոգություն չկա, կուժեղացնենք վերահսկողությունը:

Ռոբերտ Ծովյան

-Կխնդրեմ պարոն Արեյանին Եղվարդի խճուղու հետ կապված ևս մեկնաբանել:

Կամո Արեյան

-Եղվարդի խճուղում աշխատում են 3 շինարար՝ իրականացնում ենք ոռոգման գծի, գազի, խմելու ջրի աշխատանքներ: Նույն հատվածի վերևի մասում դեպի՝ Զովունի-Տիգրան Պետրոսյան-4-րդ թաղամաս-Զովունի գոտում, իրականացնում ենք ասֆալտապատում՝ խաչվել են իրար. այդ հատվածը մենք կկանոնակարգենք: Պարոն Ավինյանին զեկուցել ենք, որ հետաձգել ենք Եղվարդի խճուղու միջին նորոգումը, որ կոմունիկացիաներն ամբողջությամբ փոխվեն, ապահովենք դրանց ամրությունը, ապա վերջում կիրականացնենք միջին նորոգման աշխատանքը:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան, խնդրեմ:

Հայկ Գրիգորյան

-Առաջին հարցս վերաբերում է Երևանի ավագանու նիստի օրակարգում ընդգրկված և ընդունված մի քանի չզեկուցվող հարցերին, որոնց վերաբերյալ Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ընթացքում մեզ հայտնի դարձավ, որ Երևան համայնքին պատկանող մի շարք համայնքային հիմնարկներ վնասով են աշխատում և ամեն տարի Երևանի բյուջեից Երևան համայնքի կողմից գումար է հատկացվում այդ վնասները փոխհատուցելու համար:

Դրանք, իհարկե, ներառում են որոշ դեպքերում, ինչ-որ ներդրումներ, բայց կարծում եմ, այս պրակտիկան ընդհանրապես հիմնավոր կասկած է թողնում, որ տվյալ հիմնարկներում կա՛մ գոյություն ունեն ֆինանսական ռեսուրսների վատնում, կա՛մ ամեն տարի այդ հիմնակները կանխամտածված վնասով են աշխատում:

Մասնավորապես, այստեղ ընդգրկված են բուժհաստատություններ, իսկ համանման հաստատությունները, ինչպես գիտենք եկամուտով են աշխատում: Այսինքն չեմ պատկերացնում մի իրավիճակ, որտեղ նույն համայնքային կառույցը մրցակցություն չի ունենա մասնավորի հետ: Հատկապես, եթե գնվում են ռետգենի սարքերը և եթե դրանք ունեն նաև վճարովի ծառայություններ: Այսինքն, եթե դա լիներ 1-2 հիմնարկ, ես այս հարցը չէի բարձրաձայնի, բայց կարծում եմ սա համատարած է: Ես հարց բարձրացրեցի Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ, փաստորեն, Երևանի քաղաքապետարանն իր ենթակայությամբ գրեթե չունի այնպիսի հիմնարկ կամ 5 % են կազմում այն համայքային հիմնարկները, որոնք որ աշխատում են ոչ վնասով:

Երկրորդ հարցս վերաբերում է մի փոքր ավելի գլոբալ հարցի. ինչպես գիտենք գոյություն ունի «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական

ինքնակառավարման մասին» օրենքներ: Երևանի ավագանու նիստերին քաղաքացիները կամ շահագրգիռ խմբերի ներկայացուցիչները կարող են մասնակցել միայն Երևանի քաղաքապետի կամ խմբակցությունների հրավերով: Ես առաջարկում եմ առանց օրենքների փոփոխություններ անելու, սեպտեմբերից որոշակի պրակտիկա ներառենք, որ հանձնաժողովի նիստերին, հանձնաժողովի նախագահները հրավիրեն շահագրգիռ որևէ հասարակական կառույցների կամ միությունների ներկայացուցիչների: Օրինակ՝ այն հարցի մասով, որի վերաբերյալ աշխատել եմ դա «Գովազդի մասին» օրենքն էր: Ես գիտեմ, որ կա դժգոհություն, թե ռեստորանատերերի միության կողմից, թե այլ շահագրգիռ կառույցների կողմից: Կարծում եմ, որ ճիշտ կլինի առնվազն հանձնաժողովների նիստերի ժամանակ կարողանանք լսել շահագրգիռ անձանց, որովհետև միշտ չէ, որ այդ որոշումներն ի նպաստ իրենց են կայանում, շատ հաճախ ուղղակի կա կոմունիկացիայի խնդիր: Այս մասով առաջարկում եմ սկսել ավագանու հանձնաժողովներից, եթե արդյունավետ համարվի այդ համագործակցությունը նաև հրավիրվի այդ անձանց Երևանի ավագանու նիստերին՝ իրենց կարծիքներն արտահայտեն:

Տիգրան Ավինյան

- Պարոն Գրիգորյան, Ձեր բարձրաձայնած երկրորդ հարցի մասով համաձայն եմ, ընդհանուր առումով քննարկելի է: Կարող եք քննարկել խմբակցությունների հետ, կարող եք հանձնաժողովի նախագահներին այդ հնարավորությունը տալ, հրավիրել համապատասխան ոլորտային ներկայացուցիչների:

Ինչ վերաբերում է Ձեր առաջին հարցին՝ մի փոքր զարմացած եմ Ձեր հարցադրումից, որովհետև այդպիսիք հենց մի քանիսն են, եթե խոսքն օրինակ վերաբերում է առողջապահական համակարգի մեր ընկերություններին: Այսինքն կան ընկերություններ որոնք, դեռևս շահույթով չեն աշխատում, բայց գերակշիռ մեծամասնությունն աշխատում է հիմնականում շահույթով: Դուք նաև կարող եք համեմատել մինչև 2022 թվականը և ներկա ժամանակահատվածը ու կտեսնեք, որ այս ընկերություններում կան էական փոփոխություններ՝ նրանց ֆինանսական վիճակի մեջ և մնացյալում: Այսինքն նրանք էականորեն սկսել են ավելի էֆեկտիվ աշխատել:

Այս մասով պարզաբանումներ կներկայացնի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

Քրիստինե Ավետիսյան

-Պարոն քաղաքապե՛տ, ավագաու հարգելի՛ անդամ, խոսքը վերաբերում է առողջապահական ընկերություններին. 18 հիմնարկից 8-ն անցած տարվա դրությամբ վնասով են աշխատել և շահութաբաժին չեն վճարել Երևան համայնքին: Այս մասով, եթե նայենք վիճակագրությունը, տարեց-տարի, շահութաբաժինն ավելացել է՝ վերջին 3-4 տարվա ընթացքում հենց առողջապահական հիմնարկների շահութաբաժին վճարելու պատճառով: Մնացած 8 հիմնարկի մասով էլ ամեն ինչ իրականացվում է: Տարվա սկզբից

նախահաշիվները կազմվում են, որպեսզի վերջում տվյալ հիմնարկն ունենա շահութաբաժին վճարելու հնարավորություն:

Տիգրան Ավինյան

Պարոն Գրիգորյան, ես հենց այս մասին էի ուզում խոսել, օրինակ՝ 2022 թվականից առաջ այս 18 հիմնարկի մասով, ուսումնասիրեք այն ժամանակ մի փոքր ավելին էին, Դուք կտեսնեք, որ գերակշիռ մեծամասնությունն ասենք 1-2 հիմնարկ էր, որ աշխատում էր շահույթով: Հիմա շահույթով է աշխատում հիմնարկների մեծ մասը և մենք ձգտում ենք, որ բոլորը դառնան շահութաբեր՝ «նորմալ-առողջ» հիմնարկներ և սա է հիմնական ճանապարհը, որ մենք այս փուլում անցնում ենք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյան, խնդրեմ:

Արամ Թորոսյան

-Ես ցանկանում եմ բարձրացնել 2 հարց, առաջինը վերաբերում է Կասկադում գտնվող «Ապերիտիվո» սրճարանին, որի գործունեությունը մեծ անհանգստություն և տհաճություն է պատճառում տվյալ սրճարանի շենքի վերևի հարկի բնակիչներին: Մշտապես տիրում է աղմուկ, շենքի մուտքի դուռը միշտ բաց է, չնայած դոմոֆոնի առկայությանը, այն օգտագործվում է մշտական անցուդարձի համար, օգտագործվում է նկուղը, որի հետևանքով այնտեղ հայտնվում են կենդանիներ, գիշերն աղմուկի պատճառով՝ ժամը 23.00-ից հետո, ևս խաթարվում է բնակիչների քունը: Խնդրում եմ, որ շատ խիստ ուշադրություն դարձնել այս հարցին, նաև նշեմ, որ տվյալ սրճարանը Կիմա Աբրահամյանի տնօրինության տակ է: Մարդիկ քաղաքի լավագույն հատվածներից մեկում՝ իրենց բնակարանում ապրելուց չեն կարողանում վայելել իրենց տունը և կյանքը, մասնավորապես՝ տարեցները:

Երկրորդ հարցս՝ Դավիթ Մալյան փողոցի 2-րդ նրբանցքում, շենքից մի փոքր վերև ընկած հատվածում առկա է 1 խաղահրապարակ, իսկ շենքի տարածքում կան նաև ավտոտնակներ, և նաև ազատ հողակտորներ: Տվյալ շենքի բնակիչները խնդրում էին կա՛մ այդ ազատ հատվածը բարեկարգել, կա՛մ որևէ զրուցարան կառուցել այդ տեղում:

Խնդրում անդրադառնալ այս հարցին ևս:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալ եմ, պարոն Թորոսյան, կանրադառնանք և կհասկանանք Ձեր մատնանշած խնդրի աստիճանը և կոնկրետ կապը տվյալ սրճարանի հետ, բայց պետք է նաև հասկանանք, որ Կասկադում ակտիվ միջավայր է տիրում, այնտեղ սրճարաններ են աշխատում: Եվրոպական տարբեր քաղաքների փորձը ցույց է տալիս, որ քաղաքի որոշակի հատվածներ, որտեղ սրճարանային կյանքն ակտիվ է, այնտեղ ապրելն ավելի բարդ է լինում, կարծում եմ դա բնական է: Նույն իրավիճակն ունենք Սարյան փողոցում, Կասկադում և Երևան քաղաքի փոքր կենտրոնի տարբեր հատվածներում: Իհարկե, սա չի

նշանակում, որ որևէ մեկն իրավունք ունի սահմանված կանոնները խախտել, և այդտեղ մենք կլինենք հետևողական և ուշադիր:

Երկրորդ հարցի մասով, կխնդրեի Նոր-Նորք վարչական շրջանի ղեկավարին արձանագրել այս մասին և, եթե պարզաբանումներ ունեք հիմա խնդրեմ ներկայացնել:

Մարատ Սևոյան

-Ցանկանում եմ նշել, որ շենքից քիչ հեռու կա խաղահրապարակ, բայց կարող ենք միասին այցելել և հասկանալ իրավիճակը:

Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմող՝
Կազմակերպական վարչություն